

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի  
2026 թվականի հունիսի 02-ի N 2 արձնագրությամբ և հրապարակվում է  
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՄ-ԳՀԾՁԲ-26/51**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԳՀԾՁԲ-26/51 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Գնման ընթացակարգի հրավերում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

**Փոփոխության նկարագրություն:** Տեխնիկական բնութագրերը անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ՝

1-ին չափաբաժնի մասով՝ «Բազրեփոկ շարժասանդուղքի ամրանավորված 99 մմ լայնությամբ: Բազրեփոկը պետք է համապատասխանի T-62477 գծագրին և TY-2539-030-90640743-2015 տեխնիկական պահանջներին: Բազրեփոկի երկարությունը պետք է լինի 150մ:»,

2-րդ չափաբաժնի մասով՝ «Վերելակի խցիկի կոճակների հրահանգի վահանակ (COP) (վերելակի խցիկի կառավարման վահանակ): Վերելակի COP-ը խցիկի ներսում տեղակայված սարք է, որը բաղկացած է ցուցադրական էկրանից և հարկի կոճակներից: Վահանակի չափսերը՝ 240 մմ x 2000 մմ է: COP վահանակի վրա տեղակայված են հարկի ցուցիչ, ահազանգի կոճակ, հերթապահի հետ կապվելու կոճակ, օդափոխիչի կոճակ, սխալ ընտրության չեղարկման կոճակ, դռները բաց պահելու և արագ փակելու կոճակներ: համարակալված 1; 3; 4; 5; 6; 7; 8; 9; 10; 11; 12; 13 մեխանիկական, ներկառուցված լուսային էֆեկտով կոճակներով: Էկրանը ցույց է տալիս ընթացիկ հարկը և վերելակի շարժման ուղղությունը իսկ լուսավորված կոճակները ցույց են տալիս յուրաքանչյուր ընտրությունը: Կոճակների միացման սխեման պետք է լինի D ; E ; F ; G ; ..... միացման տեղով, միացման ձևը պտուտակային: Վահանակի գույնը սև, նյութը ապակե կամ պլաստիկ: Մասնակիցը մինչև ապրանքի մատակարարելը պետք է ապրանքի ձևը և տեսքը համաձայնեցնի պատվիրատուի հետ:»,

3-րդ չափաբաժնի մասով՝ «Վերելակի խցիկի դռան ատամնավոր փոկ, մետրով (բաց), լայնությունը 12 մմ, երկարությունը 13 մ:»,

4-րդ չափաբաժնի մասով՝ «Վերելակի դռան CW-CCW շարժաբեր-շարժիչ 24VDC, 300 պտ/րոպե, 90W, R:1/9, S1 կոդավորիչով(с энкодером): Շարժիչը 24 Վ հաստատուն հոսանքի: Հզորությունը 90 Վտ: Ելքի արագությունը 300 պտույտ/րոպե: նվազեցման հարաբերակցությունը 1/9: Հաստատուն հոսանքի խոզանակով շարժաբեր-շարժիչը հատուկ նախագծված է վերելակի դռների համար: Հիմնական տեխնիկական բնութագրերը: Լարումը՝ 24 Վ հաստատուն հոսանք: Հզորություն՝ 90 Վտ: Ելքի արագություն՝ 300 պտույտ/րոպե: Գնահատված պտտող մոմենտը՝ 2.5 Նմ: Շարժաբերի տեսակը մոլորակային՝ 1/9 փոխանցման հարաբերակցությամբ: Ձևը ուղիղ: Աշխատանքային ռեժիմը՝ S1 (անընդհատ աշխատանքային ռեժիմ): Պտտման ուղղությունը դարձափոխային: Պաշտպանությանը դասը IP44: Կոդավորիչի պարամետրերը: մոդիֆիկացված մոդելում օգտագործվում է մագնիսական կոդավորիչ, դռների փեղկի ճշգրիտ դիրքավորման համար: Մատակարարվող կոդավորիչը պետք է համապատասխանի գործող թվային համակարգի հետ: Ազդանշանի տեսակը՝ Երկու ալիք (A և B ֆազերի), որը թույլ է տալիս կարգավորիչին որոշել շարժման արագությունն և ուղղությունը: Ֆիզիկական

պարամետրեր; Քաշը՝ 1.5–2 կգ (կախված պատյանի նյութից՝ պլաստիկե կամ մետաղական): Չափսերը՝ 240 x 39 x 39 մմ: Պատվիրատուն կարող է պահանջել նմուշ:»,

5-րդ չափաբաժնի մասով՝ «Վերելակի խցիկի և հակակշռի ուղղորդիչի հոլովակային կոճղակի լրակազմ 16 մմ ուղղորդիչների համար (Башимак роликовый в сборе): Հոլովակները պատված են պոլուէթիլենային կամ ռետինե օղագոտով և ինքնակարգավորվում են զսպանակների միջոցով: Հոլովակների քանակը երեք: Պատվիրատուն կարող է պահանջել նմուշ:»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 13)

Էլ. փոստ՝ a.hovhannisyan@promotion.am

Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ